

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՈՐՔԻ 235 ՀՈՂՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽՐԱԽՈՒՄԱԿԱՆ ՆՈՐՄԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Արմինե Մելիքսեթյան

*ՀՀ ռստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի
ավագ դասախոս, ռստիկանության մայրը,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Խրախուսական նորմերը կամ քրեական պատասխանատվությունից ազատելու հատուկ տեսակները ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված հանգամանքներ են, որոնք հնարավորություն են տալիս անձին ազատվելու քրեական պատասխանատվությունից:

Խրախուսական նորմերի դասակարգման վերաբերյալ կան բազաթիվ տեսակետներ: Օրինակ՝ Վ. Ա. Ելեոնսկին դրանք դասակարգում է հետևյալ կերպ. նորմեր, որոնք խրախուսում են անձի ակտիվ վարքագիծը (անհրաժեշտ պաշտպանություն, ծայրահեղ անհրաժեշտություն, հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառել), նորմեր, որոնք խրախուսում են հետագա հանցավոր վարքագծից հրաժարումը, նորմեր, որոնք խրախուսում են դատապարտյալների ուղղումը¹:

Բացառելով խրախուսական տարրերի առկայությունը անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության վերաբերյալ նորմերում՝ որոշ հեղինակներ գտնում են, որ այդ նորմերը անձին ոչ մի նոր շահ չեն տալիս, և բացի դրանից՝ խրախուսական նորմերը քրեական իրավունքում վերաբերում են ոչ թե անձանց, այլ հանցագործության սուբյեկտներին²: Խրախուսական նորմեր պետք է համարել միայն նրանք, որոնք անձին հնարավորություն են տալիս ազատվելու քրեական պատասխանատվությունից հետհանցավոր դրական վարքագծի համար³:

Խրախուսական նորմերը կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1. կամավոր գործողություններ, որոնք ուղղված են հանցագործության բացահայտմանը նպաստելուն,

2. կամավոր արարքներ, երբ անձը դադարեցնում է հանցավոր արարքը, կանխում է հետագա վնասը և ծանր հետևանքները,

3. կամավոր գործողություններ, երբ անձը հանձնում է օրենքով նախատեսված առարկաները:

Խրախուսական նորմերից կամ քրեական պատասխանատվությունից ազատելու հատուկ տեսակներից որոշ մասը պարունակում է գործուն զղջալու տարրեր: Սակայն քրեական օրենսգրքի հատուկ մասի որոշ հոդվածներում նախատեսվում են նաև այնպիսի խրախուսական նորմեր, որոնք պարունակում են հանցագործությունից կանոնի

¹Տե՛ս Եлеонский В. А. Поощрительные нормы уголовного права и их значение в деятельности органов внутренних дел. Хабаровск, 1984, էջ 94:

²Տե՛ս Загородников Н. И., Стручков Н. А, Направления изучения советского уголовного права// Советское государство и право. 1981, №7, էջ 53:

³Տե՛ս Галкин В. М. Система поощрений в советском уголовном праве//Советское государство и право. 1977, №2, էջ 92:

հրաժարվելու տարրեր:

ՀՀ քրեական օրենսգրքի 72 հոդվածի (քրեական պատասխանատվությունից ազատելը գործուն զոջալու դեպքում) 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ նորմը պարտադիր բնույթ չի կրում, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված խարախուսական նորմերի դեպքում անձին քրեական պատասխանատվությունից ազատելը իրավակիրառողի համար դառնում է պարտադիր: Բացի դրանից՝ խրախուսական նորմերի դեպքում անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար նրա առջև ավելի քիչ <<պահանջներ>> են դրվում, քան գործուն զոջալու դեպքում: Դա պայմանավորված է նրանով, որ թեկուզ և ծանր կան առանձնապես ծանր հանցագործության առանձնահատկություններից ելնելով՝ օրենսդիրը խրախուսում է հանցավորին, որպեսզի նա հանցագործությունից հետո ձեռնպահ մնա ավելի ծանր հետևանքներ առաջացնող արարքներ կատարելուց: Խրախուսական նորմերը կարող են կիրառվել նույնիսկ այն դեպքում, երբ հանցանքն առաջին անգամ չէ, որ կատարվում է:

ՀՀ քրեական օրենսգրքի 235 հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում ապօրինի կերպով հրազեն (բացի ողորկափող հրազենից և դրա փամփուշտներից), ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտներ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար: Նույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված է խրախուսական նորմ, համաձայն որի՝ նշված առարկաները կանոնադրված հանձնաձևով անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում: Այս հոդվածում նախատեսված խրախուսական նորմի կիրառման հետ կապված՝ պրակտիկայում առաջ են գալիս որոշ խնդիրներ, որոնց մի մասը ունի քրեաիրավական բնույթ, մյուս մասը՝ քրեադատավարական:

Փաստորեն, ՀՀ քրեական օրենսգրքի 235 հոդվածով նախատեսված խրախուսական նորմն պարունակում է գործուն զոջալու տարրեր: Գործուն զոջալը բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերով: Օբյեկտիվ կողմը ներառում է որոշակի գործողություններ, որոնք ուղղված են վնասը հարթելուն կամ վերականգնելուն, կանոնադրված ներկայանալուն⁴: Սակայն գործուն զոջալու հետևանքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքում ավելի շատ և ավելի շուտ ընկած է սուբյեկտիվ կողմը, որն ներառում է հանցանք կատարած անձի գիտակցությունը, զգացմունքները, որոնք արմատապես փոխել են անձի մտածելակերպը և դրանով իսկ նվազեցրել նրա վտանգավորությունը: Վ. Ն. Դադունովը գտնում է, որ գործուն զոջալն առկա է այն դեպքում, երբ անձը ընդունում է իր մեղքը, օգնում է իրավապահ մարմիններին, պատրաստ է հատուցելու կամ այլ կերպ հարթելու վնասը⁵: Սակայն իրավակիրառ պրակտիկայում գործուն զոջալու հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելիս նախապատվությունը տրվում է օբյեկտիվ չափանիշներին:

Հայաստանի Հանրապետության իրավակիրառ պրակտիկային հայտնի է ապօրինի կերպով պահվող զենքը կանոնադրված հանձնելու այնպիսի եղանակ, երբ անհայտ անձը զանգահարում է ոստիկանություն և հայտնում, որ այս կամ այն վայրում թողել է իր կողմից ապօրինի պահվող հրազենը: Տվյալ դեպքում վարույթ իրականացնող մարմինը նախապատրաստված նյութերով որոշում է կայացնում քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հղում կատարելով Հայաս-

⁴Տե՛ս Щерба С. П. , Савкин А. В. Деятельное раскаяние в совершенном преступлении, М, 1997, էջ 13:

⁵Տե՛ս Додонов В. Н. Сравнительное уголовное право. Общая часть. М, 2010, էջ 386:

տանի Հանրապետության քրեական օրենսգրքի 235 հոդվածի 5-րդ մասին, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին (հանցակազմի բացակայություն): Ստացվում է այնպես, որ քրեական հետապնդում չի իրականացվում ոչ թե անձի, քանի որ անձը հայտնի չէ, այլ դեպքի կապակցությամբ: Սակայն քրեական հետապնդումը, քրեական պատասխանատվությունից ազատելը սուբյեկտիվ կատեգորիաներ են, այսինքն՝ միայն անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից և ոչ թե դեպքը: Բացի դրանից՝ չնայած Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված խրախուսական նորմներն ունեն տարբեր պահանջներ, որոնք անձին պատասխանատվությունից ազատելու հիմքեր են, սակայն գրեթե բոլորն ունեն մեկ ընդհանուր պահանջ, այն է՝ խրախուսական նորմերը սահմանում են, որ անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում: Հնարավոր է, որ ապօրինի պահվող հրազենը ձեռք բերված լինի հակաշտակությամբ, որի պարագայում անձը չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից: Իսկ եթե վարույթն իրականացնող մարմինը չի «ճանաչում» ապօրինի պահվող հրազենը կամովին հանձնած անձին, նա չի կարող պարզել նաև հրազենի ձեռքբերման եղանակը, աղբյուրը և չի կարող ճիշտ որոշում կայացնել: Նման պրակտիկայի պայմաններում հնարավոր չի լինում նաև պարզել մյուս հանցակիցների քրեական պատասխանատվության հարցը: Այսինքն՝ հնարավոր է, որ հրազենի ապօրինի ձեռքբերմանը օժանդակած լինի այլ անձ: Արդյոք հանցակիցը (տվյալ դեպքում՝ օժանդակողը) ևս կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, երբ կատարողը կամովին ներկայացնում է ապօրինի պահվող հրազենը: ՀՀ քրեական օրենսգրքի 235 հոդվածով նախատեսված խրախուսական նորմի վերլուծությունից պարզ է դառնում, որ քրեական պատասխանատվությունից ազատվում է միայն նշված առարկաները կամովին հանձնած անձը: Իսկ ինչպե՞ս է լուծվում մյուս հանցակիցների քրեական պատասխանատվության հարցը: Այդ մասին ՀՀ քրեական օրենսգրքը «լռում է»: Օրինակ՝ եթե չափանիշ վերցնենք կամովին հրաժարման ինստիտուտը, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 36 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցագործության կազմակերպիչը, դրդիչը կամ օժանդակողը կամովին հրաժարվելու դեպքում ենթակա չեն քրեական պատասխանատվության, եթե նա պետական մարմիններին հաղորդելով կամ ձեռնարկված այլ միջոցներով կանխել է կատարողի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելը:

Սակայն խրախուսական նորմերի հետևանքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը տարբերվում է կամովին հրաժարվելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտից:

Եթե տվյալ դեպքում քրեական հետապնդում չի իրականացվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, այսինքն՝ հանցակազմի բացակայությամբ, ապա դա ենթադրում է, որ չկա հանցանք, ուստի չեն կարող լինել նաև այլ հանցակիցներ:

Հնարավոր է՝ օբյեկտիվ պատճառներից ելնելով՝ անձը չկարողանա հանձնել իր կողմից ապօրինի պահվող հրազենը, այլ դրա գտնվելու վայրի մասին հայտնի իրավապահ մարմիններին: Այսինքն՝ մեկ այլ գործով ոստիկանության բաժնում գտնվող անձը կարող է հայտնել իրավապահ մարմիններին, որ իր տանն ապօրինի պահում է հրազեն: ՌԴ գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիայի որոշման մեջ այն դիրքորոշումն է հայտնված, որ անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա կամավոր հայտնում է իրավապահ մարմիններին ապօրինի պահվող հրազենի

գտնվելու վայրի մասին՝ գիտակցելով հետագայում այն պահելու հնարավորությունը⁶:

ՀՀ քրեական օրենսգրքի 235 հոդվածով նախատեսված առարկաների հանձնումը կհամարվի կամովին, եթե անձն իր հայեցողությամբ է հանձնում նշված առարկաները՝ գիտակցելով, որ իրեն բացահայտելու իրական սպառնալիք այդ պահին չկա: Եթե անձը զգում է, որ առկա է իրեն բացահայտելու իրական սպառնալիք, և դրանից դրդված է իրականացնում հանձնումը, ապա այն չի համարվում կամովին⁷:

Այս առումով տեղին է մեջբերել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները: Հանձնումը համարվում է կամովին, եթե անձը, գիտակցելով, որ այդ պահին իրեն բացահայտելու իրական սպառնալիք չկա, իր հայեցողությամբ հանձնում է ՀՀ քրեական օրենսգրքի 235 հոդվածում նշված առարկաները, այսինքն՝ անձի ընդունած որոշումը պետք է լինի ազատ և գիտակցված ընտրության արդյունք: Բացահայտման իրական սպառնալիքի առկայությունը և դրանից դրդված հանձնումը չեն կարող համարել կամովին⁸: ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 235 հոդվածի 5-րդ մասով նախատեսված խրախուսական նորմին, նշել է, որ անձի կամովին հանձնելու որոշումը պետք է լինի ազատ և գիտակցված ընտրության արդյունք, որպեսզի անձը օգտվի տվյալ խրախուսական նորմով սահմանված արտոնությունից: Եթե առկա է բացահայտման իրական սպառնալիք, և անձը հանձնումն իրականացնում է դրանից դրդված, ապա դա չի կարող համարվել կամովին: Արգելված առարկաները հանձնելու այն դեպքում, երբ իրավապահ մարմինները տեղյակ են տվյալ անձի մոտ համապատասխան առարկաների առկայության մասին, սակայն հիմքեր չկան ենթադրելու, որ անձը գիտակցում է դա, անհրաժեշտ է հանձնումը դիտել կամովին և կիրառել խրախուսական նորմը⁹:

Եթե անհյատ անձը զանգահարում է ոստիկանություն և հայտնում, որ այս կամ այն վայրում գտնվում է հրազեն, ապա առանց անձի առկայության հնարավոր չէ պարզել նրա այդ քայլի՝ կամովին կամ հարկադրված կատարելու հանգամանքը:

Հարցն ունի ոչ միայն քրեաիրավական, այլև որոշ քրեադատավարական բնույթի խնդիրներ:

Քրեական իրավունքի տեսության մեջ փաստարկված է այն դրույթը, որ քրեական պատասխանատվությունից ազատելը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ առկա են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու բոլոր նախադրյալները, և նրա արարքը պարունակում է կոնկրետ հանցագործության բոլոր հատկանիշները: Քրեական պատասխանատվություն չի կարող առաջանալ, երբ անձի արարքում բացակայում է հանցակազմ¹⁰: Քրեական պատասխանատվությունից ազատելը չի կարող կիրառվել նաև այն դեպքում, երբ ապացուցված չէ մեղադրյալի մասնակցությունը հանցագործությանը, երբ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 35-ով նախատեսված քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածում նախատեսված հանգամանքներն օբյեկտիվորեն բացառում են գործի վարույթը կամ քրեական հետապնդումը,

⁶ Տե՛ս Судебная практика по уголовным делам, составитель. Г. А. Есаков, М., 2007, էջ 592:

⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Հատուկ մաս, 2004 թ., էջ 502:

⁸ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի ԱՎԴ/0059/01/08 որոշում. 2008 թ.:

⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ. Երևան, 2011 թ., էջ 212:

¹⁰ Տե՛ս ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, դասագիրք բուհերի համար, ԵՊՀ հրատարակչություն, 2007 թ., էջ 464:

իսկ նույն օրենսգրքի 37 հոդվածը նախատեսում է այնպիսի հանգամանքներ, որոնք թույլ են տալիս չհարուցել քրեական հետապնդում, և որոնց դեպքում նպատակահարմար չէ անձին ենթարկել քրեական պատասխանատվության: Ընդ որում, 37 հոդվածի կիրառման կարևոր պայմաններից են տվյալ գործով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքերի և պայմանների առկայության ապացուցված լինելը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածով նախատեսված հանգամանքների բացակայությունը¹¹: Նույն աղբյուրում նշվում է, որ ՀՀ քրեական դատավարության 37 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատախազի որոշմամբ քրեական գործ կարող է չհարուցվել, և քրեական գործ կարող է չիրականացվել անձին քրեական պատասխանատվության ենթարկելուց ազատելու ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հիմքերի առկայությամբ կապված գործուն գղջալու հետ¹²: Սակայն պետք է նշել, որ թեև խրախուսական նորմերը նաև գործուն գղջալու տարատեսակներ են, բայց դրանք այնպիսի օբյեկտիվ հանգամանքներ են, որոնց դեպքում բացառվում է քրեական հետապնդումը, քանի որ, ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի 72 հոդվածի 1-ին մասի, որի դեպքում քրեական հետապնդում իրականացնելը կամ չիրականացնելը կախված է դատախազի «հայեցողությունից», ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում նախատեսված խրախուսական նորմերը վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնում են անձին ազատել քրեական պատասխանատվությունից: Ուստի տվյալ դեպքում իրավակիրառ պրակտիկան ճիշտ է այն առումով, որ խրախուսական նորմերը համարվում են օբյեկտիվ հանգամանքներ, որոնց դեպքում անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի ուժով:

Խնդիրն այն է, որ գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածը, որը սահմանում է այն օբյեկտիվ հանգամանքները, որոնք թույլ չեն տալիս հարուցել քրեական գործ և իրականացնել քրեական հետապնդում, նախատեսում է մի շարք հիմքեր, որոնք իրավակիրառողին թույլ են տալիս ազատել անձին քրեական պատասխանատվությունից: Սակայն այդ հիմքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցից ոչ մեկը չի սահմանում այն դեպքերը, երբ քրեական օրենսգրքի հատուկ մասում նախատեսված խրախուսական նորմերի ուժով անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից: Հետաքննություն իրականացնող սուբյեկտների շրջանում կատարված հարցումները ցույց են տվել, որ նման դեպքերում որոշում է կայացվում քրեական հետապնդումը չիրականացնելու մասին, և հղում է կատարվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին, այն է՝ հանցակազմի բացակայությունը: Սակայն խրախուսական նորմերի դեպքում հանցակազմը առկա է: Այսինքն՝ անձը կատարել է այնպիսի արարք, որը պարունակում է քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները: Բացի դրանից՝ որն ավելի կարևոր է ընդգծել, 35 հոդվածի 1-ին մասի 1-ին 2-րդ 3-րդ կետերով և 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնելիս անձը ձեռք է բերում արդարացվածի կարգավիճակ և ունենում է ռեպրիիտացիայի իրավունք:

Նշված քրեադատավարական խդիրը, կարծում են, կստանա իր օրենսդրական պատշաճ լուծումը ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի պայմաններում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ընդհանուր մասի նախագծի 34 հոդվածը սահմանում է քրեական հետապնդումը բացառող հանգամանքները: Այդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ մեղադրյալը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր

¹¹Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն. Հատուկ մաս , Երևան, 2003 թ., էջ 32:

¹²Տե՛ս նույն տեղում:

կամ *հատուկ մասի* դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդհանուր մասի նախագծի 34 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերը նշված կետով քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում անձը ձեռք չի բերում ռեաբիլիտացիայի իրավունք, այսինքն՝ այդ կետը չի համարվում արդարացնող հիմք: Սակայն այստեղ ևս կա մեկ խոչընդոտ: Ստացվում է այնպես, որ քանի դեռ անձը ձեռք չի բերել մեղադրյալի կարգավիճակ, նա չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից այդ հիմքով: ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում սահմանված դեպքերում խրախուսական նորմերով ներկայունս անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից նույնիսկ հետաքննության փուլում, ինչը, կարծում եմ, սխալ է և չի համապատասխանում անմեղության կանխավարկածի դրույթներին: Սակայն նման քայլը արդարացվում է այն ժամանակի և միջոցների խնայողությամբ, որոնք ծախսվում են քրեական դատավարության ընթացքում:

Գործող օրենքների պայմաններում նպատակահարմար կլինի բացառել անհայտ անձի զանգով ՀՀ քրեական օրենսգրքի 235 հոդվածով նախատեսված խրախուսական նորմը կիրառելու և քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելու պրակտիկան: Այսինքն՝ խրախուսական նորմերն անհրաժեշտ է կիրառել այն դեպքում, երբ հայտնի է հանցանք կատարած անձը, ինչը իրավակիրառողին հնարավորություն կտա պարզելու՝ կա՞ն արդյոք տվյալ անձի արարքում այլ հանցակազմի հատկանիշներ, արդյոք կա՞ն այլ հանցակիցներ, թե՞ ոչ:

Կարևոր է նաև այն հանգամանքը, թե անձը ՀՀ քր.դատ. օր.-ի 35 հոդվածով նախատեսված որ հիմքով է ազատվում քրեական պատասխանատվությունից: Խրախուսական նորմերի որոշակի տեսակներ կան, որոնք, փաստորեն, պարունակում են հանցագործությունից կանոփն հրաժարվելու տարրեր: Օրինակ՝ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 217 հոդվածի 4-րդ մասի՝ ահաբեկչության նախապատրաստությանը մասնակցած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա, իշխանության մարմիններին ժամանակին հայտնելով կամ այլ միջոցներով, նպաստել է ահաբեկչության խափանմանը, և եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում:

Տվյալ դեպքում վարույթն իրականացնող մարմինն անձին քրեական պատասխանատվությունից ազատում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի 11-րդ կետի ուժով, համաձայն որի՝ քրեական գործ չի կարող հարուցվել, և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործը ենթակա է կարճման, եթե անձը կանոփն հրաժարվել է չավարտված հանցագործությունը մինչև վերջ հասցնելուց, և նրա՝ փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում:

Իսկ ինչպես արդեն նշվել է, պրակտիկայում անձի կողմից ապօրինի պահվող հրազենը հանձնելու դեպքում անձը քրեական պատասխանատվությունից ազատվում է 35 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայությամբ: Ստացվում է, որ առաջին դեպքում անձը ձեռք չի բերում արդարացվածի կարգավիճակ, նույնիսկ եթե նա կանոփն հրաժարվել է հանցանքի կատարումից, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 235 հոդվածով նախատեսված հանցանք կատարած անձը, ազատվելով քրեական պատասխանատվությունից, ձեռք է բերում արդարացվածի կարգավիճակ և ստանում որոշ իրավունքներ՝ կապված խախտված իրավունքների վերականգնման հետ: Կարծում եմ, որ ապօրինի պահվող հրազենը անձի կողմից կանոփն հանձնելու դեպքում (եթե պարզ է, հայտնի է անձը) պետք է կիրառվի ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը (հանցակազմի բացակայությունը), այլ 35 հոդվածի 1-ին

մասի 12-րդ կետը, որը սահմանում է, որ անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից: Թեև խրախուսական նորմերը օրենսդրորեն անրագրված են ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում, սակայն դրանց վերաբերյալ ընդհանուր գաղափարը տրված է ընդհանուր մասի 72 հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ այլ տեսակի հանցանք կատարած անձը քրեական պատասխանատվությունից ազատվում է միայն Հատուկ մասի հոդվածով հատկապես նախատեսված դեպքում:

Իրավակիրառ նման պրակտիկայի պայմաններում նախ՝ ապօրինի պահվող հրազենը կամովին հանձնած անձը ձեռք չի բերի արդարացվածի կարգավիճակ, երկրորդ՝ հնարավոր կլինի լուծել հանցակիցներին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը:

PROBLEMS OF ENFORCEMENT OF THE ENCOURAGING NORM SET FORTH BY THE 5TH PART OF THE ARTICLE 235 OF THE CRIMINAL CODE OF RA

Armine Meliksetyan

*Senior lecturer at department of criminal law and
criminology of Academy of Educational Complex
of Police of the Republic of Armenia,
Major of police, Candidate of juridical sciences*

Encouraging norms or special forms of absolution from criminal charges are circumstances set forth by the Criminal code of the RA, that provide an opportunity to a person to exonerate from criminal charges. Several authors consider that encouraging norms are circumstances that exclude the crime in the act. However, the part of encouraging norms includes the elements of “surrender with a confession of guilt” and the other part includes the elements of “voluntary renunciation”.

According to the 5th part of the article 235 of the Criminal code of the RA, a person, who has voluntary surrendered items set forth by the article, exonerates from criminal charges if his/her act does not include other components of crime. In practice, according to the article 235, the law enforcing body makes a decision on termination of prosecution in the case of these persons, relying on the point 2 of the part 1 of the article 35 / the absence of crime in the act / of the Criminal procedure code of the RA. Such legal proceedings provide a person the status of justified. However, a person can not be justified, as he/she has already committed a crime set forth by the article 235 of Criminal code of the RA. The problem is that operating Criminal procedure code of RA does not include an appropriate point, which can be used by the law enforcing body in such cases.

The given problem is considered in the scope of the project of the new Criminal procedure code of RA and may find its solution.

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ О ПРИМЕНЕНИИ ПОощРИТЕЛЬНОЙ НОРМЫ, ПРЕДУСМОТРЕННОЙ ЧАСТЬЮ 5-ОЙ СТАТЬИ 235 УГОЛОВНОГО КОДЕКСА РА

Армине Меликсетян

*Старший преподаватель кафедры уголовного права
и криминологии Академии Образовательного комплекса Полиции РА,
майор полиции, кандидат юрид. наук*

Поощрительные нормы или особые виды освобождения от уголовной ответственности являются обстоятельствами, предусмотренными в Уголовном кодексе РА, которые дают возможность лицу освободиться от уголовной ответственности. Некоторые авторы считают, что поощрительные нормы являются обстоятельствами исключающими преступность деяния. Однако часть поощрительных норм включают элементы явки с повинной, а другая часть заключает в себе элементы добровольного отказа.

Согласно части 5-ой статьи 235 Уголовного кодекса РА, лицо, добровольно сдавшее предметы предусмотренные в этой статье, освобождается от уголовной ответственности, если его действие не содержит другой состав преступления. На практике, согласно статье 35 УПК РА, правоприменитель в таких случаях принимает решение о прекращении уголовного преследования в отношении этих лиц, опираясь на пункт 2-ой части 1 статьи 35 /отсутствие состава преступления/. Такой исход процессуальных действий дает лицам статус оправданного. Однако лицо не может быть оправданным, так как он уже совершил преступление, предусмотренное статьей 235 УК РА. Проблема состоит в том, что действующий УПК РА не содержит соответствующего обоснованного пункта, на который может опираться правоприменитель в таких случаях.

Данная проблема обсуждается в проекте нового УПК РА и возможно получит свое положительное решение.

Բանալի բառեր – խրախուսական նորմեր, քրեական պատասխանատվություն, մեղայականով ներկայանալ, կամավոր հրաժարում, հանցակազմ, իրավակիրառող, արդարացված:

Key words: Encouraging norms, criminal charges, surrender, voluntary renunciation, components of crime, the law, justified.

Ключевые слова: Поощрительные нормы, уголовная ответственность, явки с повинной, добровольный отказ, состав преступления, правоприменитель, оправданный.